

Թվին ՌՃԺ Զատիկ Տեառն եւ Յարութիւն՝ Ապ-
րիլ ԺԴ, որ աւուրք լուսնին ին, որ և Հրէայք զբա-
ղարջակերն արարին Ապրիլ Դ ի ԺԴ լուսնին: Զայս
սակս այսմ յայտ արարաք՝ զի զծուագատիկն Յոյնք
Ապրիլ Զ առնեն եւ մեք ի ԺԴ, եւ այն որ ի Կիրակի
հանգիպի օրագիւտն, ոչ տան ի միւս Կիրակի, վասն
այսորիկ սխալին, զի թէ այն ստոյգ¹⁾ էր, պարտ էր
եւ զայս Ապրիլ է առնել, զի պատճառէին զանցանել
զբազում աւուրց լուսնին, որ եւ այժմիկ շատ էանց
քան զայն որ ասացաւ:

Յետ աւուրց երեց՝ Դչի աւուր (17 Ապրիլ) ման-
զուլ արար զտէֆտէրտար Իպրահիմ եւ ետ նմա ըզ-
յնգիպտոս, զոր նախ կարգեաց զնա, եւ ետ զքոյր
արքայի նմա ի կնութիւն, որ էր երբեմն կին Փագ-
լին եւ խօսեցեալ Շահսուարօղլուն, եւ հրաման ա-
րար ԻԶ ամսոյն, և ի նոյն շաբաթու ԻԳ ամսոյն սպան
զՍէտրէտինզատէ էֆէնտին, որ երբեմն լեալ էր զազի
Ստամպոլու, եւ սպան զպէկլիկճի էֆէնտին՝ այր չէ-
լէպի. սպան եւ զՂօնեալի ոմն զափուճիպաշին այսու
պատճառաւ թէ յաւուր բարեկենդանեաց իւրեանց՝
նստեալ սոքա առնթեր միմեանց ի զօսսանս Ֆնտուխ-
լուի և ումս գրելով խաղս ինչ արկանեն ընդ իրեարս
եւ խօսս, եւ ասեն՝ Նշանս ինչ արհաւիրաց լինելոց է
եւ մեծամեծք անկանելոց են, զոր իմացուցեալ զայս
վէզիրի ի նոյնուժ պահու, եւ նա ի նոյնուժ Ժամու
տանի²⁾ առ արքայ և ասէ. Այսպէս արարեալ են արքն
այնոքիկ, կամ յիմ վերայ հանգչի բանն կամ ի վե-
րայ քո: Եւ կոչեցեալ արքայի ի ներքս ի մէջ դրանն
և սպանանէ. և նախ իմացեալ զայս այլ մեծամեծացն՝
հայցեն ներել³⁾ պէկլիկճուն, եւ ասէ. Մի՛ խնդրէք

1) ստուգ.

2) տանէ.

3) ներեն.